

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ԱՐՍԱՎԻՐԻ ՍԱՐԳԻ ԴԱՇՏ ՀԱՍԱՅՆՔԻ ԴԵԿԱՎԱՐԻ

20.01.2017թ.

Արմավիրի մարզի Դաշտ համայնքում տեղական ինքնակառավարման մարմինների գործունեությունն առավել թափանցիկ և հրապարակային դարձնելու և տեղական ժողովրդավարությունն ամրապնդելու նպատակով, 2016 թվականի 2-րդ կիսամյակի և տարվա ընթացքում կատարված աշխատանքների վերաբերյալ ներկայացնում եմ հաշվետվություն Դաշտ համայնքի բնակչությանը:

Արմավիրի մարզի Դաշտի համայնքն ունի մոտ 1021բնակիչ՝ այդ թվում նաև ժամանակավոր բնակվող անձինք, որոնցից հիմնական մասը զբաղվում է գյուղատնտեսական աշխատանքներով, իսկ ոչ գյուղատնտեսական աշխատանքով՝ բնակչության մոտ 10%:

Համայնքը գազաֆիկացված է մոտ 90%-ով, իսկ մնացած 10%-ի համար այժմ կազմվում է նախագիծ առաջիկայում անբողջովին գազաֆիկացնելու համար: Ռոզդան ջրի մատակարարման հետ կապված կան որոշակի դժվարություններ: Խմելու ջրի ջրամատակարարումը շուրջօրյա է:

2016թ. ընթացքում.

- կայացել է ավագանու հերթական և արտահերթ թվով 10 նիստ և ընդունվել է ավագանու թվով 42 որոշում,
- ընդունվել է համայնքի ղեկավարի թվով 11 որոշում,
- արձակվել է համայնքի ղեկավարի թվով 13 կարգադրություն,
- համայնքի ազգաբնակչությանն է տրամադրվել թվով 440 հատ տարբեր բովանդակությամբ տեղեկանքներ,
- Մուտք է եղել թվով 186 պաշտոնական գրություն, որոնք քննարկվել են և որոնց ընթացք է տրվել,
- Ելք է եղել թվով 127 պաշտոնական գրություն,
- Մուտք է եղել թվով 4) դիմում,
- Անսեկան և տարեկան հաշվետվությունները ժամանակին է ներկայացվել մարզպետարան, սոցիալական ծառայություն և վիճակագրական վարչություն:
- Կազմակերպել է անասնազլխաքանակի հաշվառում և ներկայացվել է վիճակագրական վարչություն, ժամանակին կազմակերպվել է հակահամաճարակային պատվաստումներ:

2016թ-ի ընթացքում իրականացվել են հետևյալ աշխատանքները

Համայնքապետարանը առանձնակի ուշադրություն է դարձրել բնակչության սոցիալ-տնտեսական վիճակի բարելավմանը:

Ընդհանուր առմամբ համայնքի անապահով ընտանիքներին ցուցաբերվել է օգնություն, ինչես նաև չի անտեսվել համայնքում սգո արարողությունները:

Մարտի 8-ի, մայրության ու գեղեցկության կապակցությամբ համայնքի միջնակարգ դպրոցում կազմակերպվել է միջոցառում՝ հյուրասիրությունով, Ծաղկեփնջերի և ծաղկեպսակների համար տրամադրվել է 310 000 դրամ գումար:

Դպրոցում վերջին զանգի միջոցառման համար տրամադրվել է 100 0000 դրամ գումար:

Սայիսի 1-ին նշվել է աշխատավորների միջազգային օրը:

Համայնքի ղեկավարի և ավագանու ուշադրության կենտրոնում է գտնվում Արցախյան ազատամարտիկները, իսկ հաղթանակի օրվա կապակցությամբ համայնքում կազմակերպվել է միջոցառում, հյուրասիրություն և համերգ: Համայնքում յուրաքանչյուր ամսվա շաբաթ օրերը իրականացվում է աղբահանություն, որի համար տրամադրվել է 780 000 դրամ գումար:

Համայնքի կենտրոնական հրապարակը, որտեղ կան նորատունկ ծառեր
և տեղադրված է խաչքարը, պարբերաբար ոռոգվում և խնամվում են
գյուղապետարանի աշխատողների կողմից:

Խաչքարի տարածքում անցկացված է գիշերային լուսավորություն:

Կատարվել է գիշերային լուսավորության ցանցի վերանորոգում և ընդլայնում:

Համայնքի զբոսայգու սալիկապատման աշխատանքները ընթացքի մեջ են:

Սառչելի գներով ձեռք է բերվել պարարտանյութ և դիզ. վառելիք,
որը բաժանվել է բնակիչներին:

Համայնքի մշակույթի տանը գործում է ազգագրական պարի խմբակ:

Պարի խումբը և դպրոցի աշակերտները տոնական օրերին հաճախ են
համատեղ կազմակերպում միջոցառում և հանդես գալիս մշակույթի տանը:

Մշակույթին տանը գործում է համայնքի գրադարանը, որտեղ առկա է մոտ
4000 կտոր գիրք, որից օգտվում են ընթերցասեր բնակիչները, ինչպես նաև
համայնքի ուսանողները:

Ամանորյա միջոցառում կազմակերպելու և անցկացնելու համար
տրամադրվել է 250 000 դրամ գումար:

Այժմ էլ իրականացվում են ակտիվ աշխատանքներ համայնքի ավագանու
և համայնքապետարանի աշխատակ. կողմից համայնքի զարգացման համար:



ՄԱՐԿ ՄԵՏՐՈՍՅԱՆ

ՔԱՂՎԱԾՔ

2017թ. հունվարի 20-ին կայացած Դաշտի համայնքի
բնակիչների ընդհանուր ժողովի արձանագրությունից

20.01.2017թ. Արմավիրի մարզի Դաշտ համայնքի մշակույթի տանը տեղի
ունեցավ Դաշտ համայնքի բնակիչների ընդհանուր ժողովը:

Ժողովին ներկա էին՝ համայնքի ավագանու անդամները, համայնքա-
պետարանի աշխատակազմի աշխատակիցները, դպրոցի տնօրենը,
Դաշտ համայնքի բուժքույրը, փոստի վարիչը, մանկավարժներ և
համայնքի բնակիչներ՝ թվով 116մարդ:

Հաշվետվությանը ներկա էր նաև Արմավիրի մարզպետարանի
տեղական ինքնակառավարման և հանրապետական գործադիր մարմինների
հարցերով վարչության պետ՝ *Արսեն Դուկասյանը*:

- Օրակարգում 1. Դաշտ համայնքի ղեկավար՝ Հրանդ Պետրոսյանի
2016թվական ընթացքում կատարած
աշխատանքների հաշվետվությունը:
2. Ընթացիկ հարցեր:

Ձեկուցող՝ Դաշտ համայնքի ղեկավար՝ Հ.Պետրոսյան:

Ներկայացված 2016թվականի ընթացքում կատարած աշխատանքների հաշվետվությունից հետո կայացավ քննարկում:

Բոլոր ներկա գտնվողները բավարար գնահատեցին համայնքի ղեկավարի կատարած աշխատանքները 2016թվականի ընթացքում:

Ավագանու անդամ՝ Մ.Միմոնյանը ողջունեց համայնքի ղեկավարի նախաձեռնությունը կապված համայնքը 100%-ով գազաֆիկացնելու աշխատանքների հետ:

Համայնքի բնակիչ՝ Է.Խաչատրյանը նշեց,որ չնայած 2012թ. մասնակի վերանորոգվեց մշակույթի տունը,սակայն այժմ լիարժեք չի գործում և հիմնովին վերանորոգման խիստ կարիք է զգացվում:

Ա.Աբրահամյանը բարձրացրեց այն հարցը,որ հողատարածքների մշակությունը դժվարանում է,քանի որ ասֆալտապատ ճանապարհով թրթուրավոր տեխնիկայով երթևեկը արգելվում է,իսկ համայնքը չունի անհիվավոր գյուղ-տեխնիկա:

Խիստ անհրաժեշտություն կա նոր գյուղ-տեխնիկայի:

Ա.Նավասարդյանը անհրաժեշտ հարցերից համարեց նաև՝ համայնքի տարածքում ոռոգման ջրի կիսախողովակների 2կմ. անցկացումը:

Բարձրացված հարցերին պատասխանեց համայնքի ղեկավար՝

Յ.Պետրոսյանը:

եսուտացավ համայնքի բնակիչների և վերադաս մարմինների աջակցությամբ
լուծել համայնքի առավել կարևոր հիմնախնդիրները:

Մարզպետարանի ներկայացուցիչ՝ Արսեն Ղուկասյանը նշեց, որ բավարար է
գնահատում համայնքի ղեկավարի գործունեությունը:

Նա նշեց նաև, որ ժողովում բարձրացված հարցերը մարզպետարանում
կքննարկվեն և կտրվի համապատասխան ընթացք:

Դաշտ համայնքի ղեկավար
Աշխատակազմի ղեկավար



Հրանդ Պետրոսյան

Հարություն Սուրադյան

3. Համայնքի տարածքում ոռոգման ջրի կիսաախողովակների

շկմ. անցկացում:

Դաշտ
Աշխատանքներ
Մեծաբնի
Մեծաբնի



[Handwritten signature]

Հրանդ Պետրոսյան
Հարություն Մուրադյան